

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՅՂՆԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Գողթնի գեղեցկատես ձորերը հնուց ի վեր անվանակոչվել են ձորերի մեջ փռված գլխավոր գյուղերի ու ավանների անուններով: Այսպես, օրինակ, նրա ձորերի մի մասը միջնադարում հայտնի է եղել որպես Բստաձոր կամ Գիլան ձոր, Ագուլիսի ձոր, Տրունյաց ձոր, Վանանդաձոր, Ցղնայի ձոր և այլն: Այս վերջին ձորում գտնվող վաղեմի ավանը՝ Ցղնան, Գողթն գավառի նշանավոր բնակատեղիներից մեկն է, որը այժմյան Զանանաք գյուղն է: Ցղնան փրոված է լեռներով երիզվող ձորի մեջ: Ցղնային մասնավոր հմայք է հաղորդում նաև գյուղի միջով հոսող կարկաչուն գետակը, նրա հնարմատ ընկուզենիների և այլ ծառերի այգիները, եկեղեցիների ու վաղեմի մատուռների, ջրաղացների ու հնձանների, մի քանի մետաքսի, կաշվի գործատների, կամուրջների ու բերդապարիսպների և այլ նյութական մշակույթի հուշարձանների կանգուն ու ավերակ հետքերը: Վերջիններս անհերքելիորեն խոսում են դեռևս ոչ այնքան հեռու անցյալի բուռն կյանքի մասին: Ստույգ է Մեսրոպ Թաղիադյանի այն կարծիքը, որը 19-րդ դարի սկզբներին այցելելով Ցղնա, նրա մասին գրել է. «...յաւէտ աւերակ իմն մեծի քաղաքի, քան թէ գիւղ անհնշան որպէս զարդիս տեսանի»[1]: Եվ իրոք, այժմյան գյուղի շրջակայքի մի շարք հնագիտական տվյալները ապացուցում են, որ Ցղնան հնուց ի վեր և միջնադարում, 12—18-րդ դարերում, նշանավոր բնակատեղի և Գողթնի աչքի ընկնող կենտրոններից մեկն էր, ուր անընդմեջ բնակվել է ավելի քան 800—900 տուն հայ բնակչություն:

Գողթնի մյուս ավանների ու գյուղերի հայկական բնակչության նման Ցղնայի ազգաբնակչությունը ևս մի շարք անգամներ ասպատակումների ու թալանի, անասելի տանջանքների ենթարկվելով տարբեր դարերում տեղահան է արվել իր հայրենի ավանից, ցրվել տարբեր տեղեր: Օրինակ, 1349 թ. Ցղնայում գրչագրված մի Ավետարանի հիշատակարանում կսկիծով է նկարագրված Ցղնայում տեղի ունեցած դեպքերը, Ցղնայի Դանիել տանուտերի տանջանքները. «...ազգն Իսմայէլի, և բազում նախատանաւք և արհամարհանաւք տանջեն և նեղեն զազգս քրիստոնէից, մինչեւ... զոմանց տունս բախտանաւք և

[1] Մեսրոպ Թաղիադեան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, 1-ին մաս, էջ 258:

հերձաք և զուր բանիւք աներեալ ջանան. զոր և սմա իսկ՝ Դանիել տանտիրոջս բազում անգամ արարին...»[2]: Վերջին տասնամյակներում ցղնեցիների մի մասը տեղափոխվել է Երևան և նրա շրջակայք:

Ցղնան հայտնի է նաև իր նշանավոր դեմքերով, ինչպիսիք են Կոմիտասը, Էդգար Շահինը, Ռուբեն Մամուլյանը, Հանրի Տրուայան, Մայքլ-Առլենը: Հայտնի են նաև ցղնեցի Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյանը՝ «Արարատ» ամսագրի խմբագիրը, մանկավարժ Հայկ Հովհաննիսյանը, «Մուրճ» ամսագրի խմբագիր Լևոն Սարգսյանը, լեզվաբան Ս. Սարգսյանը և այլք[3]: Մինչև այժմ էլ Ցղնայի վաղեմի բարձրադիր թաղամասերից մեկում, Տամբրի կոչվող թաղում, պահպանվում է անմահ Կոմիտաս վարդապետի պապերի՝ Սողոմոնանց ապարանքի ավերակները, որից քիչ վերև, լեռնալանջին, գտնվում է հայկական ավանդությունների շարքում հիշատակվող հարս ու փեսի քարերը[4]:

Ցղնան, որը հիշատակվում է 14-րդ դարից, ձեռագրական և վիմագրական աղբյուրներում անվանակոչվել է նաև Ցխնա, Ծղնա, Ցաղունա: Ըստ Ցղնայի ս. Աստվածածին վանքի տաճարի 17-րդ դարի վիմագրության, Ցղնան տեղացիների՝ գողթների, բարբառով կոչվել է Ցուղնա: Հ. Ղ. Ալիշանի ստուգաբանությամբ, «բնիկ հայկական անուն գեղջս է Ցղնա, որ հարկ է թէ մեծ և նշանաւոր էր ի հնումն... Ցղնացւոց յատուկ է բարբառն Զոկաց: Ի դարուց հետէ յայտնեալ են Ցղնացիք իբրև սիրողք վաճառականութեան, վասն որոյ և բազմաշրջիկք...»[5]: Մ. Թաղիադյանը սխալմամբ Ցղնա ավանը նույնացնելով Սյունյաց Ծղուկի հետ՝ գրել է. «Սա թուի ինձ գոլ Ծղկանց աւան ի համանուն գաւառի, ուր նստէր երբեմն նահապետ Սիւնեաց»[6]: Ինչպես վաղուց արդեն ապացուցված է, Սյունյաց Ծղուկ գավառի կենտրոնը հանդիսացած ավանը գտնվում է ոչ թէ Գողթնում, այլ այժմյան Սիսիանի շրջանում[7]: Ըստ տեղացիների բացատրության Ցղնա անվանումը նշանակում է «ցեղն Անոյ»:

Պատմական և ձեռագրական աղբյուրների վկայությամբ Ցղնան Գողթնի կազմում հնուց հռչակված է եղել նաև իր ճարտարապետական հուշարձաններով, որոնց մասին սկզբնաղբյուրներ հանդիսացող տեղեկություններ ենք հանդիպում նախ և առաջ այդտեղ գրչագրված ձեռագրերում, որոնցից մոտ 10-ը հայտնի է բանասիրության մեջ և երկուսը պահպանվում է Երևանի Մատենադարանում: Ցղնայի գրչատներից բանասիրության մեջ հայտնի ամենահին ձեռագիրը՝ Ավետարանը, գրչագրվել է «ի յայսմ ամի թուաբերութեանս Հայոց ՉՂԸ (1349), ի դառնալի և ի վրշտացեալ ժամանակիս...», Ցղնայի Դանիել տանուտերի օրոք: Վերջինս այդ Ավետարանը ստանալով, «...ետ զսա անջինջ յիշատակ ի գեղեցիկ և յաստուածաբնակ տաճարս Ցղնոյ՝ մեծի այն սուրբ Աստուածածնին, որ հանապազ մանկունք սորա հրճուին...»[8]: Այս ձեռագրի տվյալներից հետո Ցղնայի և նրա հուշարձանների մասին տեղեկությունների հանդիպում ենք ավելի քան մեկ դար հետո՝ 1467 թ. Ցղնայում Ումիդ սարկավագի մի Ավետարանի նորոգման առիթով: Վերջինս 1940-ական թվականներին գտնվել է Իրանի Չարմահալ գավառի Վերին Քոնարք գյուղից: Ըստ այդ Ավետարանի հիշատակարանի այն նորոգվել է «...ի գաւառս Գողթան, ընդ հովանեաւ սուրբ անաց սուրբ Գիորքայ զաւրաւորիս և սուրբ Նշանիս և այլ սրբոցն ի սմա, ի փծուն և նորաստսումն Ումիդ սարկաւագիս, ի վայելումն անձին մերում և յիշատակ ննջեցելոցն մերոց՝ Ցղնու աստուածայսէր քահանայիցս, և հոգևոր տանուտէրցս, և հողագործ ժողովրդեանս՝ երիտասարդաց և կուսանաց... Նորոգեցաւ ի թուին ՋԺԶ (1467)...»[9]: Այնուհետև դարձյալ մեկ դարի հասնող ժամանակով Ցղնայի մասին տեղեկությունները բացակայում են և միայն մի ձեռագրի՝ Երուսաղեմում 2460 համարի տակ պահպանվող «Ժողովածոյ ծիսական գրոց»-ի գրիչը «ՌԲ (1553) թվին, մարտի ամսոյ ԻԸ ին, Ցղնու եկեղեցին չափեցայ...»[10]: Հետո՝ 1593 թ.

---

[2] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 379:

[3] **Հ. Քրիշչյան**, Անմար կանթեղ, Եր., 1969, էջ 12—13:

[4] **Արամ Ղանալանյան**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 53:

[5] **Հ. Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 342:

[6] **Մ. Թաղիադեան**, Նշվ. աշխ., էջ 258:

[7] **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, էջ 205:

[8] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 379:

[9] «Էջմիածին», 1951, ապրիլ-մայիս, էջ 85: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, 2-րդ մաս, Եր., 1958, էջ 256:

[10] «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատ. 8-րդ, կազմեց՝ Նորայր եպիսկ. Պողարեան, Երուսաղեմ, 1977, էջ 122: Հրատարակչի մոտ թվականը ՂԲ է, որը, ըստ մեր կարծիքի, տպագրական վրիպակ է: Ավելի հավանական է, որ Ղ-ն Ռ է, կամ էլ թվականը՝ ՌՂԲ:

առաջ գրչագրված մի Ավետարանի հիշատակարանի վկայությամբ, այն գրչագրվել է «...ի Գողթան գաւառիս, ի գիւղս որ կոչի անուամբ Ցաւղունա ընդ հովանեաւ սբ... (եղծված է) գծող սորա Ստեփանոս աբեղայի. եւ յիշեայ ի տէր աղաչեմ ով մանկունք եկեղեցւոյ»[11]:

Ցղնայում Մարութա քահանայի և Մարտիրոս երիցու գրչագրած երկու ձեռագրերը պահպանվում են Երևանի Մատենադարանում: Այդ ձեռագրերից մեկը՝ Մաշտոցը, Մարութա գրիչը գրչագրել է 1634 թ. «...ի գեւղս Ցղնայ», որը «վերըստին նորոգել եղև ի ձեռ կազմարար Դաւիթ դպրի, և ընչիւք Ցղնցի ուստայ Սուքիազին և կենակցոյն իւրոյ. Զանազանին ի թվին ՌՃԽ և Ե (1696)ին»[12]: Երկրորդ ձեռագիրը՝ Մեկնութիւնք Սաղմոսաց»-ը, Մարութա գրիչը գծել և գրչագրել է Մարտիրոս իրիցու հետ միասին. «...ի թվականիս Հայոց մեծաց. ՌԶԳ (1634)... գրեալ եղև կտակս աստվածային ի յերկրիս Գողթան գաւառի ի գեւղս Ցղնայ... ի դուռն սուրբ յ(Աստուածածն)ի, ձեռամբ մեղապարտ և թարմատար գրչի Մարութայ...»[13]:

Այսպիսով, ձեռագրերի հաղորդած տվյալներով պարզվում է, որ Ցղնան ունեցել է ս. Աստվածածին վանքը, ս. Գրիգոր և ս. Նշան եկեղեցիները, որոնցից ա.ժմ կանգուն է ս. Աստվածածնի եկեղեցին և մեկ եկեղեցի էլ ս. Սարգիս անունով: Ցղնայի ճարտարապետական հուշարձանների մեջ, դեռևս 1349 թ. գրչագրված ձեռագրի գրչի որակավորմամբ, գեղեցիկ և մեծ տաճար է հանդիսանում նրա ս. Աստվածածին տաճարը: Վերջինս կառուցված է Ցղնայի հյուսիս-արևելյան թաղամասի հարթ վայրում, որն իր ճարտարապետությամբ միջնադարյան ուշագրավ և կարևոր հուշարձան է (նկ. 1ա, 1բ):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռագրական աղբյուրներում 14-րդ դարի 80-ական թվականներից հիշատակվող ս. Աստվածածնի նախկին տաճարը կառուցված է եղել 12—13-րդ դարերում և մի քանի անգամ վերանորոգվել, որի հետքերը պարզորոշ նկատվում են շինության շարվածքներում: Այս տաճարը 17-րդ դարի կեսերին Գողթնի և Երնջակի մի շարք հուշարձանների թվում վերանորոգվել է նաև Մովսէս և Փիլիպոս կաթողիկոսների կողմից[14]: Ս. Աստվածածինը վերանորոգվել է նաև 17-րդ դարի վերջերին՝ 1683 թ., որի վերաբերյալ պահպանվել են վիմագիր արձանագրություններ:



Նկ. 1ա. Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու հյուսիս-արևելյան ճակատը

Ս. Աստվածածին տաճարը ամբողջովին կառուցված է սրբատաշ բազալտից և կարմիր քարերից, արևելք-արևմուտք առանցքով, քառամույթ գմբեթակիր բազիլիկայի հորինվածքով: Եկեղեցու հատակագիծը (նկ. 2) բաղկացած է արևելյան մասում գտնվող ավագ և յոթանիստ աբսիդից, զույգ երկհարկանի ավանդատներից և դահլիճից, որն իր արևմտյան և հարավային ճակատներում ունի գեղեցիկ քանդակազարդերով երիզված մուտքեր: Ընդարձակ դահլիճի (21,3×18.57 մ) չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա բարձրանում է ամբողջովին քարաշեն ու մեծաձավալ, ութ լուսամուտներով գմբեթը:

Տաճարի ավագ և ընդարձակ աբսիդը, որն ունի 7 որմնախորշեր, դահլիճի հատակից բավականին բարձր է և ունի չորս

---

[11] Երևանի Մատենադարան, Մագիստրոսի ցուցակ, Ավետարանների հիշատակարաններ, էջ 629, 649:

[12] Մատենադարան, № 4175, էջ 376ա, 375բ:

[13] Մատենադարան, № 1184, էջ 198բ, 199ա:

[14] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 353:

Նկ. 1բ. Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու ընդհանուր տեսքը

աստիճաններ: Երկկողմյա ուղղանկյունի հատակագծեր ունեցող ավանդատների որմերում թողնված հատուկ մուտքերի միջոցով բարձ աստիճաններով բարձրանում են երկրորդ հարկի ավանդատների, աբսիդի և կառույցի այլ մասերում թողնված հատուկ թունելանման թաքստոցներ, որոնք ժամանակին ծառայել են որպես դարաններ ու պահեստներ: Հյուսիսային ավանդատնից մի առանձին մուտք էլ բարձրանում է դեպի տաճարի տանիք: Ավագ աբսիդի լուսավորվածությունը իրականացված է նրա արևելյան որմում իրար կողքի թողնված երկու խաչաձև լուսամուտներով, իսկ ավանդատներինը՝ մեկական ուղղանկյունի լուսամուտներով:



Նկ. 2. Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափագրությունը և գծագիրը՝ Ա. Այվազյանի)

Բարձր ու լուսավոր ինտերյեր ունեցող այս եկեղեցու ներքին տարածությունը ավաղված է և ժամանակին այն զարդարվել է որմնանկարներով, որոնք այժմ չկան: Դժբախտաբար ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարման մասին տեղեկություններ չեն պահպանվել: Միայն հ. Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկություններով 1691 թ. փետրվարի 3-ին, Կարին գնալու ճանապարհին հայր Վիլլոդ Հիսուսյանը «...ագաւ ի Ցղնա, որ գեօղ մեծ կոչէ զայն (Tsegna) և թուրքարէն Ճալանա (Dchalana), 300 տամբք Հայոց, և գեղեցիկ եկեղեցեաւ, յորում է տես զպատկերս ս. Լուսաւորչին և ս. Սեղբեստոսի. իսկ տէր գեղջն էր իշխան ոմն Վրացի Տաւութ Միրզա անուն»[15]: Եկեղեցու մեջ, արևելյան մույթերի միջև, 17-րդ դարում ամփոփված է 5 անյուն, որոնց արձանագիր տապանաքարերը մինչև այժմ

[15] Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 342:

էլ մնում են, և արձանագրությունները հրատարակել է Երվանդ Լալայանը[16]:

Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցին առաջին հերթին աչքի է ընկնում իր ծավալա-տարածական հորինվածքի մեծ չափերով, որը Նախիջևանի գմբեթավոր բազիլիկաների մեջ առաջին մեծակառույց հուշարձանն է: Նրա միջին նավի կողքի երկու նավերի կամարների թռիչքները որմնամույթերից մինչև մույթերը կազմում է 3,77 մ: Մույթամիջի կամարների թռիչքը ընդերկայնական մասում հավասար է 6,8 մ, իսկ ընդլայնական մասում՝ 6,9 մ: Ընդերկայնական մասում աբսիդի որմնամույթերից մինչև մույթերը ընկած տարածությունը կազմում է 5,82 մ, իսկ արևմտյան մույթերից մինչև եկեղեցու արևմտյան որմնամույթերը՝ 6,86 մ: Այստեղ անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ ս. Աստվածածին եկեղեցին ի սկզբանե մեծակառույց և գեղեցկատես է եղել, որը ձեռագրական աղբյուրներում ևս անվանվել է մեծ տաճար: Նրա մեծակառույց լինելու մասին 16-րդ դարի կեսերի ձեռագրերից մեկում արձանագրվել է նրա չափերը, որը հանապատասխանում է այժմյան տաճարի չափերին. «ՌԲ (1553) թվին, մարտի ամսոյ ԻԸ ըն Ցղնու եկեղեցին չափեցայ, դուրս(ի) երկարութիւնն ԼԲ կազ էր, և լայնութիւնն ԻԲ կազ էր, միջի երկարութիւն ԻԸ կազ, և լայնութիւնն ԺԹ կազ էր»[17]:

Ս. Աստվածածին եկեղեցին արտահայտիչ և գեղեցկատես է նաև իր արտաքին պատկերով: Տաճարի միջին նավի և նրան ուղղահայաց կիսաշրջանաձև թաղերով ծածկված երկթեք կտուրներով տրանսեպտը եկեղեցու արտաքին ուրվագծում ստեղծել են խաչաձև ծավալ, որի մեջտեղում բարձրանում է մեծածավալ գմբեթը: Հուշարձանին մի գեղեցիկ տեսք է տալիս նաև նրա ընդհանուր ծավալի համարյա մեջտեղով տարված օղակաձև քանդակագոտին, որին միացված են նաև բոլոր պատուհանների և մուտքերի շուրջը երիզող քանդակազարդերը: Առանձին հմայք են տալիս նաև արևելյան, հարավային և արևմտյան ճակատներում տեղադրված վիմագիր խաչքարերը: Ժամանակին եկեղեցու «կտուրի չորս անկիւններից քաշ են արուած մի մի քարէ օղակներից շինուած շղթաներ, որ օրօրում են քամու ազդեցութեամբ»[18]:

Ս. Աստվածածին եկեղեցու արտաքին արտահայտչականությանը հանդիսավորություն են հաղորդում նրա քանդակազարդերով և պատկերաքանդակներով զարդարված մուտքերը: Տաճարի գլխավոր՝ արևմտյան, մուտքը, որը երիզված է եռաշարք քանդակազարդով, կամարից ներքև՝ քառանկյունը շրջանակի մեջ ագուցված է մանուկ Հիսուսը գրկին նստած Աստվածամոր թագադրման բարձրաքանդակը (նկ.



Նկ. 3. Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի պատկերաքանդակը

3): Արտահայտիչ և երանությամբ լցված դեմքով բազմած Աստվածամոր գլխի ուղղությամբ քանդակված երկու հրեշտակները թագը դնելով Աստվածամոր գլխին, անմեղ հայացքները ասես հառել են դեպի երկինք: Հրեշտակներից քիչ վար, Աստվածամոր աջ և ձախ կողմերին, քանդակված է այդ բարձրաքանդակի քանդակման տարեթիվը՝

ԹՎ(Ի)Ն ՌՃԼԲ (1683)

Ցղնայի այս պատկերաքանդակն իր մի շարք նմանություններով հիշեցնում է 17-րդ դարի 70-ական թվականներին վերակառուցված Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի Զ. Ագուլեցու կողմից քանդակել տված Աստ-

[16] Ե. Լալայան, Գողթն, արտատպված «Ազգագրական հանդեսից», Թիֆ., 1904, էջ 82—83:

[17] «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց», հատ. 8-րդ, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1977, էջ 122:

[18] Ե. Լալայան, Գողթն, էջ 82:

նածածնի պատկերաքանդակը: Կարելի է ենթադրել, որ դրանք միևնույն քանդակագործի աշխատանքներն են հանդիսանում:

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի պատկերաքանդակից 50—60 սմ ներքև երեք երկար տողերով քանդակված է ծղնայի իշխանների անթվակիր արձանագրությունը, որոնք, իրենց մուլքն ու ռու-



Նկ. 4. Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքը և պատկերաքանդակը

կին ներդնելով տաճարի նորոգման համար, ձգտել են ս. Աստվածածինը է՛լ ավելի պայծառացնել ու գեղեցկացնել: Այս արձանագրությունը, աննշան տարընթերցումներով հրատարակել են Մ. Փափազյանը և Ե. Լալայանը[19]: Արևմտյան մուտքի աջ և ձախ կողմի երկու որմնամույթերի և եկեղեցու որմի միջև գտնվող կոնտրուկտիվ կապը վկայում է, որ այս մուտքի առջև ժամանակին եղել է երկու մույթերի հենքի վրա կառուցված զանգակատուն: Վերջինիս կառուցման և ավերման մասին ոչինչ հայտնի չէ:

Գեղեցկատես է նաև ս. Աստվածածին տաճարի հարավային մուտքը, որը բացվում է եռահարկ զանգակատան մեջ: Այս մուտքի բարձր կամարը ևս զարդարված է եռաշարք գեղեցիկ քանդակազարդերով: Մուտքի կամարի տակ, քառանկյունի շրջա-



Նկ. 5. Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան 2-րդ և 3-րդ հարկերը

նակի մեջ, քանդակված է Պողոս և Պետրոս առաքյալների ծնրադիր պատկերաքանդակները (նկ. 4), որոնք իրենց գլուխների հավասարությամբ վեր են բարձրացել շղթայաձև և կանոնավոր շրջանագծի մեջ քանդակված քառաթև խաչապատկերը: Պողոս առաքյալն իր ձախ ձեռքում բռնած ունի նաև կշեռք:

Եկեղեցու հարավային մուտքի առջև վեր է բարձրանում նրա զանգակատունը: Վերջինս, որը կառուցված է եկեղեցու կարմրերանգ սրբատաշ քարերից, ունի եռահարկ կազմություն և իր գմբեթի բարձրությամբ եկեղեցու ծածկից 3—4 մ չափով բարձր է: Ս. Աստվածածին եկեղեցու այս զանգակատան առաջին հարկը հատակագծում կազմված է երկու հաստաթեղույս մույթերից, որոնց թաղակիր կամարները

[19] Մ. Փափազյան, Գողթան գավառ (լուսանկարչական ալբոմ), Վաղարշապատ, 1890, № 304: Ե. Լալայան, Գողթն, էջ 82:

նստում են եկեղեցու հարավային որմին կցված որմնասյուների վրա: Զանգակատան երկրորդ և երրորդ հարկերը բարձրանալով առաջին հարկի ծածկի վրա՝ եկեղեցու հարավային որմի կոնստրուկտիվ կապից լրիվ անջատվել են և իրենց կազմությամբ շրջանաձև են, կառուցված են ութանկան վեցանիստ կամարակապ գեղեցիկ սյուներով, որի երրորդ հարկի վրա բազմել է քարաշեն կաթուղիկեն (նկ. 5):



Նկ. 6. Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան «Քրիստոսի խաչելությունը» բարձրաքանդակը

Ցղնայի ս. Աստվածածնի զանգակատունը գրավիչ է նաև իր արտաքին տեսքով: Այն եկեղեցու նույն քարից կառուցված լինելով ներդաշնակվում է նրա հետ: Զանգակատան առաջին հարկի երկու մույթերի հարավային ճակատներում, կամարների ուղղությամբ, ուղղանկյունի և դեպի ներս գլանաձև որմնախորշերի մեջ բավականին մեծությամբ քանդակված են մեկական բարձրաքանդակներ: Զանգակատան արևմտյան մույթի որմնախորշում քանդակված է «Քրիստոսի խաչելությունը», որի մարմնի վրա ցայտուն կերպով ընդգծվում են նույնիսկ գամերի և գեղարդի խոցվածքի հետքերը (նկ. 6): Այս քանդակի որմնախորշից վերև, երկրորդ շարքի շարվածքի արևելյան կողմում տեղադրված մի քարի վրա, քանդակված է շրջանագծի մեջ առնված ճանաչավոր արեգակի պատկերը: Իսկ որմնախորշից վար, մույթի անկյունային մասում, քանդակված է մի թևատարած աղավնու պատկեր: Համանման արեգակի և աղավնու քանդակներ են արված

Նկ. 7. Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատան Աստվածամոր բարձրաքանդակը

նաև զանգակատան արևելյան մույթի վրա, որի հարավային ճակատի որմնախորշում քանդակված է թագակիր Աստվածամոր կանգուն պատկերաքանդակը: Վերջինիս դեմքը և հագուստը պատկերավոր ու արտահայտիչ է և կանգնած է ձեռքերը կրծքին խաչած: Աստվածամոր աջ կողմում, նրա գլխի ուղղությամբ, քանդակված է մի հրեշտակի փոքրիկ և կանգուն պատկերը, որն իր ձախ ձեռքը դրել է Աստվածամոր թագի վրա: Մ. Փափազյանի տեղեկություններով. «Սոյն զանգակատան արևմտեան երկու սիւների միոյն վրայ նոյնպէս քան-

դակուած են Ադամ և Եւայի մերկ և փոքրադիր պատկերները. միւս սեան վրայ մի հրեշտակ ձեռին կշիռ բռնած»[20]: Այս պատկերաքանդակները այժմ վնասված են:

Ս. Աստվածածին եկեղեցու հարավային զանգակատան կառուցման մասին պատմական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Նրա կառուցվածքի և պատկերաքանդակների արվեստի վկայություններով կարելի է եզրակացնել, որ այն կառուցվել է 16-րդ դարի վերջերին կամ 17-րդ դարի կեսերին, ուր 19-րդ դարի վերջերին կար 17-րդ դարի մի բանի մաշված տապանաքարեր[21]:

Ս. Աստվածածին տաճարի արևելյան ճակատում, առաջին հարկի ավանդատների և ավագ աբսիդի լուսամուտների վերևի հատվածներում, տեղադրված են 10 արձանագիր խաչքարեր: Ըստ տեղաբաշխվածության, արձանագրությունները տեղադրված են իրարից հավասար հեռավորությունների և բարձրությունների վրա, որոնցից 5-ը ագուցված է աբսիդի խաչաձև լուսամուտների հյուսիսային կողմում, իսկ մյուս 5-ը՝ հարավային կողմում: Այդ խաչքարեր-արձանագրությունները, որոնցից մի բանիսի արձանագրությունները և առանձին մասերը այժմ քայքայված են, ըստ իրենց բովանդակության վերաբերվում են եկեղեցու 1683 թ. վերանորոգմանը օժանդակելուն և հրատարակված չեն: Ընդ որում եկեղեցու 1683 թ. վերանորոգման աշխատանքներին աջակցել են նաև կանայք:

[20] Մ. Փափազյան, նշվ. աշխ:

[21] Նույնը:

(Շարունակելի)